

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՈՒՐԳ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԿԱՍ
ՂԵԿԱՎԱՐԵԼՈՒ ՀԱՆՑԱԿԱԶՄԻ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

ԱՐՄԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ԼԵՎՈՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ֆինանսական բուրգ ստեղծելը, կազմակերպելը կամ ղեկավարելը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում (այսուհետ՝ Օրենսգիրք) որպես հանցավոր արարք նախատեսվել է միայն 2016 թվականին: Այդ լրացումը կոչված էր լուծելու մի շարք խնդիրներ, այդ թվում՝ համարժեք քրեաիրավական գնահատական տալու հանցավոր որոշ արարքների: Այնուամենայնիվ, «Դատալեքս» պաշտոնական համակարգում այդ հանցակազմով հարուցված քրեական գործերի՝ դատարան հասնելու որևէ դեպք 2016 թվականից ի վեր չի հաստատվել: Եզակի են նաև մամուլում լուսաբանված դեպքերը ֆինանսական բուրգի առնչությամբ հարուցված քրեական գործերի վերաբերյալ¹: Սա հիմք է տալիս եզրակացնելու, որ հանցակազմ նախատեսելը չի ծառայել իր նպատակին: Սույն հոդվածում անդրադարձել ենք ֆինանսական բուրգ ստեղծելու, կազմակերպելու կամ ղեկավարելու հանցակազմի մի շարք թերությունների, որոնց ուսումնասիրությունը խիստ արդիական է դրա հետագա կիրառությունն ավելի արդյունավետ դարձնելու առումով:

Պատմությանն ամենահայտնի և լայնածավալ բուրգի գործարկումը ռուսական «MMM» ընկերության հետ է կապված, որը ղեկավարում էր Սերգեյ Մավրոդին: Ըստ տարբեր տվյալների՝ 1993-1995 թթ. այդ ֆոնդի զոհն են դարձել շուրջ 15 միլիոն մարդիկ տարբեր երկրներից: Անգամ այսօր գործում են ընկերության դուստր կազմակերպություններ, որոնք տեղակայված են հենց զարգացող երկրներում, որտեղ ճգնաժամային իրավիճակները դրդում են անձանց փնտրելու իրենց խնայողությունները պահպանելու դյուրին ճանապարհներ²: «Russia Beyond» պարբերականը նշում է, որ Սերգեյ Մավրոդիի ձեռքակալությունը և դատապարտումը Ռուսաստանում և Աֆրիկայի երկրներում առաջ էին բերել բազմահազարանոց ցույցեր. մարդիկ չէին հավատում, որ դարձել են խարդախության զոհ, և քննադատում էին իրավապահ մարմիններին՝ ձեռնարկատիրության հանճարի գործունեությունը

¹ Տե՛ս օրինակ՝ <https://news.am/arm/news/481271.html>, <https://yerevan.today/all/iravakan/23858/hh-um-steghtsvel-e-finansakan-burg-kazmakerputyun-qk>

² Տե՛ս https://www.rbth.com/business/2017/01/25/how-the-mavrodi-financial-pyramid-scheme-operates-in-asia-and-india_688451

խաթարելու համար: Հայաստանը՝ իբրև զարգացող երկիր, ֆինանսական բուրգերի կազմակերպիչների համար կարող է լինել բավականին հրապուրիչ թիրախ, ուստի իրավական կարգավորումները պետք է լինեն համարժեք՝ նման արարքների տարածումը կանխելու նպատակով: Ընդ որում, տարբեր պետությունների վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ ֆինանսական բուրգերն ավելի մեծ թափով են սկսել տարածվել և ավելի ընդգրկուն են դարձել: Օրինակ՝ Քենիայում կատարված հարցումները ցույց են տվել, որ մասնակիցների շուրջ 44%-ին մոտեցել և առաջարկել են կատարել ներդրումներ՝ կարճ ժամկետում բարձր սոկոսադրույթով վերադարձ խոստանալով. արդյունքում՝ 18%-ը համաձայն են եղել: Ներդրում կատարած անձանց 82%-ը վնաս է կրել: Մասնակիցներին հարցրել են նաև, թե արդյոք վերջինները դիմել են ինչ-որ մարմինների. 40%-ը նշել է, որ որևէ մարմնի չի դիմել, քանի որ վստահ էր դրա անարդյունավետությանը, 22%-ը որևէ մարմնի չէր դիմել, քանի որ չգիտեր, թե որ մարմնին է պետք դիմել³:

Ռուսաստանի Դաշնության ներքին գործերի նախարարության տվյալների համաձայն՝ 1992 թվականին արձանագրվել է 9 ֆինանսական բուրգ, 2009 թվականին՝ 39⁴: Հանցավոր այս արարքի տարածման տեմպերն էլ ավելի հրատապ են դարձնում հանցակազմի ուսումնասիրության անհրաժեշտությունը: Թեև ֆինանսական բուրգերի դեմ պայքարի ամենաարդյունավետ միջոցը բնակչության իրազեկվածությունը բարձրացնելն է, սակայն արդեն տեղի ունեցած դեպքերին համարժեք գնահատական տալով ևս կարելի է կանխել նման հանցավոր երևույթները:

Ֆինանսական բուրգի միասնական հասկացություն որևէ կոնվենցիայում կամ միջազգային այլ պայմանագրում առկա չէ: Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ շատ պետություններ ֆինանսական բուրգի օրենսդրական ձևակերպման փոխարեն հասկացությունը նախատեսում են տարբերակող չափանիշների սահմանման միջոցով⁵: Օրինակ՝ Կանադայում «Մրցակցության մասին» օրենքով սահմանվում են բրգաձև սխեմաներին բնորոշ հատկանիշներ, որոնց ի հայտ գալու դեպքում կազմակերպիչները ենթարկվում են քրեական պատասխանատվության: Համաձայն օրենքի՝ հանցագործություն է համարվում՝

- մասնակիցների ներգրավումից հատուցում ստանալու իրավունք ձեռք բերելու համար գումարներ վճարելը,
- նախագծին միանալու իրավունքի համար որոշակի ապրանքներ գնելու պահանջ դնելը,
- մասնակիցներին ապրանքի՝ առևտրային տեսանկյունից ոչ ող-

³ Տե՛ս <https://www.cgap.org/blog/who-targeted-financial-pyramid-schemes-and-poor>

⁴ Տե՛ս https://cdn.fsbx.com/v/t59.2708-21/85203569_1097630097252369_7186282001983340544_n.pdf/finansov-e-piramid-ponyatie-priznaki-problem.pdf?_nc_cat=108&_nc_sid=0cab14&_nc_ohc=Nh0vuyuxNYgAX8eFFfn&_nc_ht=cdn.fsbx.com&oh=551202bf3a8fb4cddc425d69cc9dbce4&oe=5E722341&dl=1&fbclid=IwAR3K7KdmhmSx_eGHafpGqk4DZkQZ9Dqp0wp-geWO6nGfat6S1kAlapDxJmw

⁵ Տե՛ս http://www.parliament.am/draft_docs5/K-990.pdf

ջամիտ քանակ վաճառելը,

- մասնակիցներին վաճառված ապրանքը ողջամիտ առևտրային պայմաններով հետ ընդունելուց հրաժարվելը⁶:

Համանման դրույթներ տեղ են գտել Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի սպառողների շահերի պաշտպանության հարցերը կարգավորող նորմատիվ իրավական ակտերում:

ԱՄՆ-ն դաշնային մակարդակում չունի ֆինանսական բուրգի հասկացությունը և այն դատապարտելը նախատեսող առանձին հոդված: Այնտեղ ֆինանսական բուրգը խարդախության եղանակ է: Երկրի պատմության մեջ ամենամեծ ֆինանսական բուրգի հեղինակ Մեյդոֆֆը դատապարտվել է, ի թիվս այլնի, խարդախության և փողերի լվացման համար⁷:

ԱՄՆ Կալիֆոռնիա նահանգի քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածը դատապարտելի է համարում ցանկացած սխեմա, որի գործունեությունը կախված է նոր մասնակիցների ներգրավման անվերջանալի շղթայից⁸:

Գերմանիայի քրեական օրենսգրքի 263-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում, *ի թիվս այլնի, այն խարդախությունների համար, որոնք վտանգում են մեծ թվով անձանց ֆինանսական միջոցները շարունակական հանցավոր գործողությունների հետևանքով*⁹: Նույնաբովանդակ են կարգավորումները նաև եվրոպական այլ երկրներում:

Ղազախստանի քրեական օրենսգրքի 217 հոդվածը պատասխանատվություն է նախատեսում ֆինանսական (ներդրումային) բուրգի ստեղծման, այսինքն՝ այնպիսի գործունեություն իրականացնելու համար, որի շահույթը պայմանավորված է իրավաբանական կամ ֆիզիկական անձանցից դրամական միջոցների կամ այլ գույքի կամ գույքային իրավունքների ներգրավմամբ, ընդ որում՝ առանց նշված գույքի՝ ձեռնարկատիրական գործունեության մեջ օգտագործելու մտադրության՝ ապահովելով ստանձնած պարտավորությունների կատարումը առկա ակտիվների վերաբաշխմամբ և մարելով մասնակիցների հանդեպ պարտավորությունները այլ ներգրավումների հաշվին, որը հավասարազոր է ֆինանսական (ներդրումային) բուրգի կամ դրա կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարմանը:

ՌԴ քրեական օրենսգրքի 172.2. հոդվածը, որը վերնագրված է «*Ֆինանսական միջոցների կամ այլ ունեցվածքի ներգրավման գործունեության կազմակերպում*», պատասխանատվություն է սահմանում *ֆիզիկական կամ իրավաբանական անձանց խոշոր չափերով ֆինանսական միջոցների կամ այլ ունեցվածքի ներգրավման գործունեության կազմակերպման համար, որում եկամուտների կամ այլ օգուտների վճարումը կատարվում է այլ անձանց միջոցների կամ ունեցվածքի*

⁶ Տե՛ս նույն տեղը:

⁷ Տե՛ս https://ru.wikipedia.org/wiki/Афера_Бернарда_Мейдоффа#Разоблачение

⁸ Տե՛ս նույն տեղը:

⁹ Տե՛ս https://www.legislationline.org/download/id/6115/file/Germany_CC_am2013_en.pdf

ներգրավման հաշվին, առանց ներդրումային կամ օրինական այլ ձեռնարկատիրական կամ այլ գործունեության, որը կապված է ֆինանսական միջոցների կամ այլ ունեցվածքի ներգրավման հետ այն ծավալով, որը համադրելի է ներգրավված միջոցների կամ այլ ունեցվածքի հետ¹⁰:

Արտասահմանյան օրենսդրությունների վերը թվարկված օրինակները հստակ ցույց են տալիս, որ շատ երկրներ չունեն ֆինանսական բուրգի վերաբերյալ առանձին հանցակազմեր, և արարքի քրեականացումն ապահովվում է այն խարդախությունն որակելու միջոցով: Ուստի իրավաչափորեն հարց է առաջանում, թե արդյոք անհրաժեշտ է առանձին հանցակազմով ֆինանսական բուրգ նախատեսել:

Ինչպես արդեն նշվել է, եվրոպական բազմաթիվ երկրներում և ԱՄՆ-ում ֆինանսական բուրգը խարդախության տեսակ է: Հայաստանում խարդախության հանցակազմի ձևակերպումը չի կարող արտահայտել ֆինանսական բուրգի ամբողջ բովանդակությունը, քանի որ, նախ, այն ուղղված է անձի սեփականության և ոչ թե տնտեսական կարգի դեմ, բացի այդ, խարդախությունը՝ որպես հափշտակության տարատեսակ, նախատեսված է նյութական հանցակազմով, այնինչ ֆինանսական բուրգի առկայությունը՝ իբրև հանրորեն խիստ վտանգավոր, պետք է պատժելի լինի, անգամ եթե հանրորեն վտանգավոր հետևանքներ ի հայտ չեն եկել: Այն, որ ֆինանսական բուրգ ստեղծելու, կազմակերպելու կամ դեկավարելու հանցակազմը նախատեսվել է տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների շարքում, պատահական չէ: Նման կառույցի առկայությունը վտանգավոր է ոչ միայն մեծ թվով անձանց սեփականության, այլև պետության համար՝ որպես տնտեսական բնականոն հարաբերությունների երաշխավորի: Բանն այն է, որ ֆինանսական բուրգը խոստանում է անհամեմատ մեծ շահույթ, քան օրինական ձեռնարկատիրական գործունեությունը: Ուստի ֆինանսական կառույցը խիստ մրցունակ լինելու շնորհիվ տնտեսական մրցակցությունից դուրս է մղում օրինական հիմունքներով գործող կազմակերպություններին՝ խաթարելով պետության բնականոն տնտեսական կարգը: Հետևապես՝ նման հանրորեն վտանգավոր և բազմաշերտ արարքի համար նյութական հանցակազմով նախատեսված խարդախությունը չի կարող համընդգրկուն ձևով կիրառվել: Ի վերջո, արդի տեխնոլոգիաների դարաշրջանում շատ ֆինանսական բուրգեր գործի են դնում ինտերնետային գովազդի գործիքակազմը: Շատ դեպքերում այդ կառույցները գովազդող կայքերում մանր տառերով գզուշացվում է, որ հաճախորդը գործ ունի ֆինանսական բուրգի հետ և կարող է կորցնել ներդրած բոլոր միջոցները: Այդ դեպքում դժվար թե հնարավոր լինի ապացուցել, որ հաճախորդին ներգրավել են խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղա-

¹⁰ Տե՛ս http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_10699/f495e538cbd830549504e85df0c84f27001900de/

նակով, քանի որ համացանցային գովազդի հիմնական սկզբունքներից մեկն այն է, որ հաճախորդը կրում է առանց պայմաններին ծանոթանալու գործարք կնքելու ռիսկերը:

Ֆինանսական բուրգի հանցակազմին չի կարող համարժեքորեն փոխարինել նաև կեղծ ձեռնարկատիրության հանցակազմը: Գուցե տարիներ առաջ այն կարող էր ընդգրկել ֆինանսական բուրգի բոլոր դրսևորումները, բայց այժմ այդպես չէ: Ինչպես երևում է Օրենսգրքի 189-րդ հոդվածի դիսպոզիցիայից, *կեղծ ձեռնարկատիրությունը առանց ձեռնարկատիրական կամ բանկային գործունեություն իրականացնելու մտադրության առևտրային կազմակերպություն ստեղծելն է*: Այժմ ինտերնետ մարքեթինգի շնորհիվ հնարավոր է նման գործունեություն իրականացնել նաև առանց առևտրային կազմակերպություն ստեղծելու: Հետևաբար՝ կեղծ ձեռնարկատիրության հանցակազմը ևս չի վերացնում առանձին հանցակազմի նախատեսման անհրաժեշտությունը:

Ինչ վերաբերում է Օրենսգրքի՝ ապօրինի ձեռնարկատիրությունը նախատեսող 188-րդ հոդվածին, ապա այն պատիժ է սահմանում *առանց պետական գրանցման, հաշվառման (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի) կամ առանց հատուկ թույլտվության (լիցենզիայի) լիցենզավորման ենթակա կամ օրենքով արգելված ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար*:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի հոդված 2-ի համաձայն՝ *ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է*: Ինչպես արդեն նշվել է, ֆինանսական բուրգի մեխանիզմը կապված չէ գույքի օգտագործման, ապրանքների վաճառքի, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման հետ: Ֆինանսական բուրգի շահութաբերության հիմքն անձանցից ֆինանսական միջոցների շարունակական ներգրավումն է՝ առանց ձեռնարկատիրական որևէ գործունեություն իրականացնելու, ուստի կարելի է պնդել, որ 188 հոդվածի առկայությունը ևս չի նպաստում ֆինանսական բուրգերին պատշաճ քրեաիրավական գնահատական տալուն:

Այս պայմաններում Օրենսգրքում 189.1 հոդվածի առկայությունը դիտարկվում է որպես իրավաչափ նախաձեռնություն: Օրենսգրքի իմաստով՝ ֆինանսական բուրգը գույքի ներգրավմանն ուղղված գործունեություն է (բացառությամբ հատուկ թույլտվության (լիցենզիայի) հիման վրա իրականացվող լիցենզավորման ենթակա գործունեության), որով գույք ներդրող կամ ֆինանսական բուրգում առաջարկվող գույքի կամ ծառայության դիմաց վճարում կատարող անձանց առաջարկվող նյութական օգուտը պայմանավորվում է բացառապես նոր ներդրողների ներգրավումից ստացված գույքի հաշվին՝ առանց նշված գույքը իրական ձեռնարկատիրական գոր-

ծունեության մեջ օգտագործելու մտադրության:

Ֆինանսական բուրգի հասկացությունը լրիվ նույն ձևակերպմամբ արտացոլվել է նաև ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծի¹¹ (այսուհետ՝ Նախագիծ) 270-րդ հոդվածում: Կարծում ենք, որ այս ձևակերպումը փոքր-ինչ թերի է, քանի որ ֆինանսական բուրգը սահմանափակվում է առաջարկվող գույքի կամ ծառայության համար վճարով: Ժամանակակից ֆինանսական բուրգերը կարող են գույքի կամ ծառայության փոխարեն առաջարկել աշխատանք կամ տեղեկատվություն: Տեղեկատվությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 132-րդ հոդվածի իմաստով համարվում է *օբյեկտի լրիվ առանձին տեսակ, ուստի չի կարող ընդգրկվել ո՛չ «ծառայություններ», և ոչ էլ «գույք» եզրույթների մեջ*: Ստացվում է, որ եթե ֆինանսական բուրգի գործողությունը հիմնված է ոչ թե ծառայություն կամ գույք, այլ տեղեկատվություն առաջարկելու վրա, ապա այդպիսի մեխանիզմ ստեղծողը, ղեկավարողը կամ կազմակերպողը ենթակա չէ քրեական պատասխանատվության, մինչդեռ հանրային վտանգավորության տեսանկյունից այդ բուրգերը միմյանցից չեն տարբերվում:

Քննարկվող հոդվածը ներառված է տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների շարքում, հետևաբար՝ դրա օբյեկտը տնտեսական գործունեության անվտանգությանն առնչվող հասարակական հարաբերություններն են: Մա արդարացված մտեցում է, քանի որ ֆինանսական բուրգի գործողությունը վտանգավոր է ոչ միայն առանձին անձանց սեփականության, այլև պետության ներսում բնականոն տնտեսական հարաբերությունների համար: Նախագծում ֆինանսական բուրգը նախատեսված է «Տնտեսական հանցագործություններ» վերտառությամբ գլխում, ինչը, մեր կարծիքով, առավել ընդունելի մտեցում է, քանի որ տնտեսական հանցագործությունները ռսնձգություն են ոչ միայն տնտեսական գործունեության, այլև տնտեսական ողջ համակարգին առնչվող բոլոր հարաբերությունների դեմ: Ֆինանսական բուրգի գործողությունը, օրինակ, խաթարում է պետության տնտեսական կարգը, որը, Սահմանադրության 11-րդ հոդվածի համաձայն, սահմանվում է այսպես. «Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն է, որը հիմնված է մասնավոր սեփականության, տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության վրա և պետական քաղաքականության միջոցով ուղղված է ընդհանուր տնտեսական բարեկեցությանը և սոցիալական արդարությանը»: Այլ կերպ ասած՝ «տնտեսական գործունեություն» հասկացությունը շատ ավելի սահմանափակ է, քան քրեական օրենսգրքի այդ գլխով նախատեսված հանցակազմերի տեսակային օբյեկտը:

Իբրև հանցակազմի սուբյեկտ հանդես է գալիս ցանկացած անձ, ով

¹¹ Տե՛ս <https://www.e-draft.am/projects/2115/about>

ստեղծել, կազմակերպել կամ ղեկավարել է ֆինանսական բուրգը կամ դրա մի մասը: Ուղղունելի է, որ օրենսդիրը դիտարկել է ստեղծողին, կազմակերպողին և ղեկավարողին որպես առանձին սուբյեկտներ, քանի որ գործնականում նրանք կարող են և չհամընկնել: Այս առումով, թերևս, հանցակազմը խնդիր չի առաջացնում:

Սուբյեկտիվ կողմից հանցանքը դրսևորվում է ուղղակի դիտավորությամբ, քանի որ բուրգ ստեղծողը, կազմակերպողը կամ ղեկավարողը գիտակցում է իր արարքի վտանգավորությունը, նախատեսում դրա հետևանքները և ցանկանում է, որ այդ հետևանքները վրա հասնեն:

Օրենսգրքի 189.1 հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանվում են նաև ծանրացնող հանգամանքները, որոնք գրեթե նույնությամբ տեղ են գտել Նախագծում: Կարևոր է այն, որ ներգրավված գույքի չափը և պատճառված վնասի չափը դիտվում են որպես տարբեր ծանրացնող հանգամանքներ: Ներգրավված գույքի չափը նշանակում է, որ այդ պահին բուրգի տիրապետման ներքո կա որոշակի արժեք ունեցող ներգրավված գույք, սակայն դա դեռ չի նշանակում, որ բոլոր այն անձինք, որոնցից այդ միջոցները ներգրավվել են, համարվում են հանցագործության զոհեր, քանի որ նրանցից ոչ բոլորն են վնաս կրելու: Թերևս ծանրացնող հանգամանքների վերաբերյալ միակ խնդրահարույց հարցն այն սկզբունքի բացակայությունն է, որի հիման վրա հաշվվելու է պետությանը պատճառված վնասը: Ներդրում իրականացրած անձանց վնասը հեշտությամբ կարելի է որոշել՝ հանելով ներդրած ֆինանսական միջոցներից կամ գույքի արժեքից այն գումարը, որը նրանք ստացել են որպես օգուտ: Նույնը չի կարելի ասել պետության կրած վնասների մասին:

Ի վերջո, խնդիրների և տարրնկալումների լուրջ տեղիք է տալիս Օրենսգրքի գործող խմբագրությամբ սահմանված խրախուսական նորմը. *«Ֆինանսական բուրգը կամ դրա մի մասը ստեղծող, կազմակերպող կամ ղեկավարող անձը ազատվում է սույն հոդվածով սահմանված քրեական պատասխանատվությունից, եթե այդ մասին կամովին հայտնել է քրեական հետապնդման մարմիններին, նպաստել է ֆինանսական բուրգի գործունեության խափանմանը և հատուցել է ֆինանսական բուրգի՝ իր կողմից ստեղծված, կազմակերպված կամ ղեկավարվող մասի գործունեության հետևանքով պատճառված վնասները, եթե նրա գործողություններն այլ հանցակազմ չեն պարունակում»:*

Բանն այն է, որ ֆինանսական բուրգի մեխանիզմը շատ դեպքերում կարող է դրսևորվել կեղծ ձեռնարկատիրությամբ, բացի այդ, առանձին անձանց նկատմամբ ֆինանսական բուրգի ղեկավար կազմն իրականացնում է խարդախություն: Ստացվում է, որ նախատեսված խրախուսական նորմը գրեթե նույնական հանգամանքներում կարող է մի դեպքում դառնալ պատասխանատվությունից ազատելու հիմք, մյուս դեպքում՝ ոչ: Օրինակ՝ եթե բուրգը ձևավորվել է որպես առևտրա-

յին կազմակերպություն, խրախուսական նորմը չի գործի, որովհետև հանցավորի արարքը կպարունակի նաև կեղծ ձեռնարկատիրության հատկանիշներ, իսկ եթե նույն գործունեությունն իրականացվի համացանցի միջոցով՝ առանց առևտրային անձ հիմնելու, խրախուսական նորմը կգործի: Նման մոտեցումը մեզ համար անընդունելի է: Կարծում ենք, որ խրախուսական նորմի ձևակերպումը պետք է հնարավորություն տա իրավապահ մարմիններին դիմած, բուրգի գործունեությունը խափանած և վնասները հատուցած անձին ազատվելու քրեական պատասխանատվությունից առանց խտրականության: Սա հատկապես արդարացված չէ այն տեսանկյունից, որ Օրենսգրքի 189 հոդվածը նույնպես խրախուսական նորմ ունի, բայց դրան հղում անելն անհնար կլինի, քանի որ 189.1 հոդվածի խրախուսական նորմի կիրառումը կախված է արարքում այլ հանցակազմերի բացակայությունից: Մրափոխարեն շատ ավելի ընդունելի է Նախագծի ձևակերպումը, համաձայն որի՝ *սահմանված գործողությունները կատարած անձն ազատվում է ֆինանսական բուրգի ստեղծման, կազմակերպման կամ ղեկավարման համար պատասխանատվությունից*: Եթե նրա արարքներն այլ հանցակազմ են պարունակում, անձը ենթակա է պատասխանատվության միայն այդ հանցագործության համար: Ակնհայտ է, որ այս դեպքում Օրենսգրքի ձևակերպման հետ կապված խնդիրներից գերծ ենք մնում:

Ֆինանսական բուրգի տարածմանը զուգահեռ՝ ժամանակակից տեխնոլոգիաների դարաշրջանում սկսել են գործել նաև օրինական համացանցային բազմաշերտ մարքեթինգով զբաղվող անձինք, որոնց գործունեությունը որևէ հանցավոր տարր չի պարունակում, ուստի անհրաժեշտ է ներկայացնել այս երկու սխեմաների միջև առկա հիմնական տարբերությունները

- ֆինանսական բուրգերը ձեռնարկատիրական գործունեություն չեն իրականացնում: Բազմաշերտ մարքեթինգ իրականացնողները ապրանքներ են վաճառում կամ ծառայություններ մատուցում,

- ֆինանսական բուրգերը շեշտը դնում են նոր անձանց ներգրավման վրա, առանց որի հնարավոր չէ ապահովել ֆինանսական բուրգերի շարունակական գոյությունը: Ի տարբերություն սրա՝ բազմաշերտ մարքեթինգի իրականացման պարագայում շեշտը դրվում է ապրանքների կամ ծառայությունների վաճառքի վրա: Դիստրիբյուտորներին (տարածողներին) պարգևավճարներ տրվում են լավ վաճառքի համար, և նշանակություն չունի, թե ապրանքը վաճառվել է արդեն ներգրավված, թե՛ նոր անձանց,

- բազմաշերտ մարքեթինգն իրականացվում է թափանցիկ ձևով: Որևէ մեկը չի պահանջում առևտրային գաղտնիքի պատրվակով գաղտնի պահել այն պայմանագիրը, որը կնքվել է,

- բազմաշերտ մարքեթինգի դեպքում ևս կարող է պահանջվել որո-

շակի գումար՝ ներգրավման համար: Սակայն, ի տարբերություն բուրգի, այդ գումարները առանձնակի մեծ չափերի չեն հասնում,

- բուրգերը գովազդող կայքերում դրվում են պատմություններ, թե ինչպես են մարդիկ միլիոններ աշխատում, իսկ օրինական մարքեթինգ իրականացնողները գերծ են մնում նման գովազդներից,

- բուրգերի դեպքում դեկավարությունը սովորաբար գաղտնի է պահվում, այնինչ օրինական ձեռնարկատերերի տվյալները սովորաբար հասանելի են, հասանելի են նաև գործունեության իրականացման հիմնական վայրը, կառուցվածքը և այլն,

- երբ բազմաշերտ մարքեթինգի կազմակերպիչներին տրվում են մանրամասն հարցեր՝ վաճառվող ապրանքի, ներգրավման պայմանների, բռնուսների տրամադրման կարգի և այլնի մասին, նրանք պատասխանում են՝ մանրամասն բացատրելով գործունեության բոլոր կարևոր հանգամանքները, ինչը չի կարելի ասել հանցավոր սխեմաների մասին, քանի որ գոյություն չունեցող ապրանքի մասին հնարավոր չէ շատ բան բացահայտել, իսկ ներգրավման մասին շատ խոսելը կարող է մատնել բուրգի կազմակերպման իրական նպատակը,

- հանցավոր սխեմաների դեպքում կազմակերպիչները ձգտում են գումարի փոխանցումներն իրականացնել կանխիկ եղանակով, որպեսզի ներդրում կատարած մարդիկ չունենան ապացույց գումար կամ գույք հանձնած լինելու վերաբերյալ և չկարողանան այդ գումարը հետ պահանջել, մինչդեռ բազմաշերտ մարքեթինգի դեպքում նման խնդիր չի առաջանում,

- ի վերջո, բազմաշերտ մարքեթինգի դեպքում դիստրիբյուտորներին առաջարկում են չվերավաճառված ապրանքը հետ գնելու հնարավորություն (buyback) ապրանքի գնի մինչև 80%-ի չափով: Ավելի պարզ ասած՝ եթե կազմակերպության ապրանքը գնել են և չեն կարողացել վաճառել, ապրանքի գնի մինչև 80%-ի ռիսկը ապահովագրված է: Նման «ճոխություն» հանցավոր սխեմաները իրենց թույլ տալ չեն կարող, ուստի անդամագրված անձանց որևէ երաշխիք չի տրամադրվում:

ԱՄՆ-ում վերջին շրջանում «Burnlounge», «Vemma Nutrition», «Herbalife» կազմակերպությունների շուրջ տեղի ունեցած հայտնի սկանդալները ցույց են տալիս, որ այս երկու երևույթները տարանջատելն այնքան էլ հեշտ չէ, և որ պատկան մարմինները շատ դեպքերում ցուցաբերում են տարբերակված մոտեցում¹²:

ԱՄՆ-ի Դաշնային առևտրի կոմիտեի սահմանած կանոնների համաձայն՝ եթե ընկերությունը ցույց է տալիս, որ ապրանքներ և ծառայություններ է վաճառում ոչ միայն ներգրավվող, այլև հասարակ սպառողներին, ապա կարելի է պնդել, որ ֆինանսական բուրգ չկա, և իրականացվում է օրինական ձեռնարկատիրություն: Այս չափանիշը հե-

¹² Տե՛ս <https://www.nytimes.com/2015/09/15/opinion/joe-nocera-the-pyramid-scheme-problem.html>, <https://www.epixelmlmssoftware.com/blog/mlm-vs-pyramid-scheme>

տագայում հստակեցվեց՝ նշելով, որ պետք է համեմատել, թե պոտենցիալ սպառողներից քանիսն են անդամագրվում, քանիսը՝ ոչ, և եթե գնորդների մեծ մասն անդամագրվում է, պետք է կասկածել ֆինանսական բուրգի գոյություն: Մակայն Վերաքննիչ դատարանն իր որոշումներում հստակեցրել է, որ կարևոր չէ անդամագրված և չանդամագրված գնորդների թվի հարաբերակցությունը, կարևոր է գործունեության նպատակը՝ անդամագրվածների ավելացում, թե՞ առևտրի ընդլայնման նշանակալից հնարավորությունների իրացում: Ամեն դեպքում, ինչպես Առևտրի կոմիտեի, այնպես էլ դատարանի ազդանշանները գործարարները համարում են երկիմաստ և կարծում, որ անհստակ չափանիշներն ավելի շատ խանգարում են իրենց, քան ուղղորդում ձեռնարկատիրական գործունեությունն օրինական ճանապարհով իրականացնելու հարցում¹³:

Այսպիսով՝ հաշվի առնելով հոդվածում ներկայացված դատողությունները՝ առաջարկում ենք ֆինանսական բուրգը սահմանող հանցակազմում կատարել հետևյալ փոփոխությունները.

- Ֆինանսական բուրգի հասկացության մեջ ներառել ոչ միայն ծառայությունների կամ գույքի, այլև տեղեկատվության դիմաց վճարը՝ հաշվի առնելով, որ տեղեկատվությունը քաղաքացիաիրավական հարաբերությունների ինքնուրույն օբյեկտ է և չի ընդգրկվում մյուս հասկացությունների մեջ:

- Ֆինանսական բուրգի հանցակազմում ներդնել պետությանը պատճառված վնասի հաշվարկման որևէ մեխանիզմ:

- Վերաձևակերպել հանցակազմում առկա խրախուսական նորմը՝ սահմանելով, որ պահանջվող գործողությունները կատարած անձինք ազատվում են 189.1 հոդվածով սահմանված պատասխանատվությունից:

Բացի այդ, հաշվի առնելով ԱՄՆ-ում դատական պրակտիկայի երկիմաստ մեկնաբանությունների հետևանքով ստեղծված անորոշ վիճակը, առաջարկում ենք հոդվածը մեկնաբանելիս զերծ մնալ ֆինանսական բուրգի և օրինական բազմաշերտ մարքեթինգի տարբերակումը ներդրողների անդամագրման նպատակով պայմանավորելուց, այլ հիմնվել հոդվածում ներկայացված չափորոշիչների վրա, որոնք առավել օբյեկտիվ են և չեն հանգեցնում խտրական կիրառության, քանի որ ցանկացած կոնկրետ իրավիճակում հաշվի են առնվում այդ իրավիճակի բոլոր առանձնահատկությունները:

Բանալի բառեր – *ֆինանսական բուրգ, խարդախություն, օրինական, բազմամակարդակ մարքեթինգ, ապօրինի ձեռնարկատիրություն, սխեմաներ*

АРМАН ОГАНЕСЯН, ЛЕВОН ПЕТРОСЯН – *Актуальные проблемы состава преступления при создании, организации или управлении финансовой*

¹³ [St' u https://www.nytimes.com/2015/09/15/opinion/joe-nocera-the-pyramid-scheme-problem.html](https://www.nytimes.com/2015/09/15/opinion/joe-nocera-the-pyramid-scheme-problem.html)

пирамидой. – В статье рассмотрены проблемы, возникающие при противоправном создании, организации или управлении финансовой пирамидой. По ходу анализа зарубежных нормативных актов, судебной практики и проекта Уголовного кодекса РА дана адекватная квалификация многим общественно опасным ситуациям и выявлен ряд недостатков, устранение которых облегчит применение проекта УК на практике.

Ключевые слова: *финансовая пирамида, мошенничество, законный многоуровневый маркетинг, незаконное предпринимательство, схемы*

ARMAN HOVHANNISYAN, LEVON PETROSYAN – *Actual Problems of Corpus Delicti of the Crime on the Creation, Organization and Management of Pyramid Schemes.* – The crime of creating, organizing or managing pyramid schemes has been studied in detail within the frames of the article discussed. Analyzing the crime in the light of foreign regulations, judicial practice and the draft Criminal Code of the Republic of Armenia, a number of shortcomings related to the article were revealed, the elimination of which can lead to giving adequate qualifications to many socially dangerous situations and making the article applicable in practice.

Key words: *pyramid schemes, fraud, lawful multilevel marketing, illegal business, schemes*